ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

30 նոյեմբերի 2016 թվականի | **թիվ 1** | քաղ. Մոսկվա

Սեւ մետալուրգիայի արտադրանքի արտադրության ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համագործակցության զարգացման մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը, հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (այսուհետ՝ անդամ պետություններ) սեւ մետալուրգիայի ճյուղի վիճակի վերլուծության արդյունքները, հաշվի առնելով արդյունաբերական արտադրության զարգացման համար պայմանների ստեղծման կարեւորությունը, ինչպես նաեւ անդամ պետությունների արդյունաբերական կոոպերացիայի, այդ թվում՝ գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության ճանապարհով խորացումը, սեւ մետալուրգիայի արտադրանքի մրցունակության բարձրացումը,

«Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությանը համապատասխան, «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական

ուղղությունների մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 9 որոշմամբ

հանձնարարում է անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն Հանձնարարականը հրապարակելու օրվանից՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համակարգմամբ՝ սեւ մետալուրգիայի արտադրանքի արտադրության ոլորտում իրականացնել համագործակցություն՝ ըստ հավելվածով սահմանված միջոցառումների ցանկի.

մինչեւ 2018 թվականի մարտի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել ակտերի նախագծերի նախապատրաստման առաջարկներ՝ համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնել համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի ընդունման մասին։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
նոյեմբերի 30-ի թիվ 1 հանձնարարականի

ՑԱՆԿ

սեւ մետալուրգիայի արտադրանքի արտադրության ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համագործակցության զարգացման միջոցառումների

I. Սեւ մետալուրգիայի արտադրանքի արտադրության ոլորտում արդյունաբերական կոոպերացիայի խորացման եւ արդյունաբերական համագործակցության խթանման պայմանների ստեղծում

1. Սեւ մետալուրգիայի արտադրանքի (մետաղաարտադրանքի) արտադրության մրցունակ հատվածների շրջանակներում այն ապրանքների որոշում, որոնցով նպատակահարմար է իրականացնել արդյունաբերական համագործակցությունը (այդ թվում՝ զգայուն ապրանքների ցանկում այդպիսի ապրանքների հնարավոր ներառման համար, որը նախատեսված է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 92 հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետով)։

2. Արտադրանքի արտադրության ոլորտում միջճյուղային կոոպերացիայի խորացում եւ միջպետական կոոպերացիայի զարգացում այնպիսի ճյուղերի համար, ինչպիսիք են կամրջաշինարարությունը եւ նավաշինությունը, խողովակների արտադրությունը, ավտոմոբիլաշինությունը, մեքենաշինությունը, շինարարական ճյուղը եւ մետաղատար այլ ճյուղեր։

3. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) տարածքում սեւ մետալուրգիայի այն արտադրանքի անալոգների արտադրության կազմակերպում եւ զարգացում, որոնք Միության տարածք են ներմուծվում երրորդ երկրներից, այդ թվում՝

ա) հարթ գլանվածքի,

բ) երկաթից կամ չլեգիրված պողպատից անկյունակների, ձեւավոր եւ հատուկ պրոֆիլների,

գ) երկաթից կամ չլեգիրված պողպատից ձողերի, առանց հետագա մշակման, բացի կռումից, տաք գլոցումից, տաք կորզանումից կամ տաք արտամղումից՝ ներառյալ գլոցումից հետո ոլորած ձողերը,

դ) խողովակային արտադրանքի,

ե) ամրանների,

զ) ֆեռոհամահալվածքների։

4. Միության անդամ պետությունների արտադրողների միջեւ սեւ մետալուրգիայի արտադրանքի արտադրության ժամանակ էներգասպառման կառավարման արդյունավետությունը բարձրացնելու հարցերով փորձի փոխանակման կազմակերպում։

5. Սեւ մետալուրգիայի ճյուղը որակավորված աշխատանքային ռեսուրսներով ապահովելու նպատակով՝ կադրերի պատրաստման եւ վերապատրաստման միջոցառումների կազմակերպում՝ ներառյալ հեռահար ուսուցման եւ Միության անդամ երկրների սեւ մետալուրգիայի առաջատար ձեռնարկություններում արտադրական պրակտիկա անցնելու հնարավորությամբ ուսումնամեթոդական կենտրոնների ստեղծումը։

II. Սեւ մետալուրգիայի ոլորտում գիտատեխնիկական համագործակցության զարգացման եւ նորարարական արտադրանքի արտադրության համար պայմանների ստեղծում

6. Սեւ մետալուրգիայի համատեղ արտադրանքի արտադրության կոոպերացիոն շղթաներում Միության անդամ երկրների արտադրողների տեխնոլոգիական գործողությունների (գործափուլերի), ինչպես նաեւ նորարարական արտադրանքի համատեղ թողարկման համար երրորդ երկրներից արտադրողների ներգրավում։

7. Արտադրության էկոլոգիականացման, ռեսուրսային եւ էներգախնայող առաջավոր տեխնոլոգիաների անցման եւ միջավայրի վրա տեխնածին ազդեցության նվազեցման ոլորտում փորձի փոխանակում։

8. Միության անդամ երկրների գիտահետազոտական ճյուղային կազմակերպությունների մասնակցությամբ՝ սեւ մետալուրգիայի արտադրանքի արտադրողների համար հանձնարարականների պատրաստում՝ Միության անդամ երկրների սեւ մետալուրգիայի ձեռնարկությունների՝ նորարարական արտադրանքի արտադրության գոյություն ունեցող տեխնոլոգիական շղթաներում ներկառուցման միջոցով նորարարական արտադրանք թողարկելու համար կողմնորոշման նպատակով, այդ թվում՝ երրորդ երկրներից արտադրողների մասնակցությամբ, ինչպես նաեւ սեւ մետալուրգիայի նորարարական արտադրանքի արտադրության նոր համատեղ կոոպերացիոն շղթաների ստեղծման ճանապարհով՝ պահպանելով զանգվածային սպառման արտադրանքի թողարկումը։

III. Միության անդամ պետությունների համագործակցության զարգացումը՝ սեւ մետալուրգիայի բարձր գործափուլերի արտադրանքի արտահանման հարցերով

9. Երրորդ երկրների շուկա սեւ մետալուրգիայի բարձր գործափուլերի արտադրանքի արտահանման զարգացման վերաբերյալ Միության անդամ պետությունների կողմից կիրառվող միջոցների մասին տեղեկատվություն ներկայացնելը Հանձնաժողով՝ անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի հետ համատեղ Միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների շուկա սեւ մետալուրգիայի բարձր գործափուլերի արտադրանքի արտահանման զարգացման վերաբերյալ հանձնարարական նախապատրաստելու համար՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության նորմերին եւ կանոններին համապատասխան։